EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 41320/13

Արամ ԴԱՎԹՅԱՆՆ

ընդդեմ Հայաստանի

(տե՛ս կից աղյուսակը)

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), 2021 թվականի նոյեմբերի 25-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking]՝ *Նախագահ,*

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan]

Անա Մարիա Գուերա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ,*

եւ Վիկտորյա Մարադուդինա [Viktoriya Maradudina]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար*,

հաշվի առնելով 2013 թվականի հունիսի 19-ին ներկայացված վերոնշյալ գանգատը,

հաշվի առնելով պատասխանող կառավարության կողմից ներկայացված հայտարարությունը, համաձայն որի Դատարանից խնդրում են հանել գանգատը գործերի ցուցակից,

անցկացնելով խորհրդակցություն, կայացրեց հետեւյալ որոշումը.

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸԹՆԱՑԱԿԱՐԳԸ

Դիմումատուի տվյալները ներկայացված են կից աղյուսակում: Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան տկն Ն. Սվարյանը:

Դիմումատուի՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն ներկայացրած բողոքները՝ կապված «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում կալանքի տակ պահելու ոչ պատշաճ պայմանների հետ, ուղարկվել է Հայաստանի կառավարություն (Կառավարություն):

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Գործը բարեկամաբար կարգավորելուն ուղղված անարդյունավետ բանակցություններից հետո Կառավարությունը Դատարանին տեղեկացրել է, որ բողոքում բարձրացված խնդրի լուծման նպատակով առաջարկում է միակողմանի հայտարարություն անել: Նրանք այնուհետեւ Դատարանից խնդրել են գանգատը հանել գործերի ցուցակից՝ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի:

Հայտարարության բովանդակությունը հետեւյալն է.

«Ես՝ Եղիշե Կիրակոսյանս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչս, հաշվի առնելով Դատարանի կողմից Գասպարին ընդդեմ Հայաստանի[1] գործով վճռի մեջ արված եզրահանգումները, սույնով հայտարարում եմ, որ Հայաստանի կառավարությունն ընդունում է, որ տվյալ դեպքում «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում դիմումատուի կալանքի տակ պահելու պայմանները չեն համապատասխանել Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված պահանջներին, եւ այդ առնչությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում: Կառավարությունն առաջարկում է դիմումատու Արամ Դավթյանին վճարել 3 600 եվրո (երեք հազար վեց հարյուր եվրո) գումար՝ ցանկացած եւ բոլոր նյութական եւ ոչ նյութական վնասները, ինչպես նաեւ ծախսերն ու ծախքերը՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ, հոգալու համար:

[1] *Գասպարին ընդդեմ Հայաստանի* [*Gaspari v. Armenia*], թիվ 44769/08, 2018 թվականի սեպտեմբերի 20:

Կառավարությունը նշում է, որ սույն գործի հանգամանքները նման են Գասպարիի գործի հանգամանքներին: Միեւնույն ժամանակ Կառավարությունը Դատարանի ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ Կառավարության կողմից ձեռնարկվել են ընդհանուր միջոցառումներ՝ հետագայում նմանօրինակ խախտումները կանխելու համար: Կառավարության ջանքերի, վերահսկողական արտաքին արդյունավետ մեխանիզմների, ինչպես նաեւ պետական եւ ոչ պետական կառույցների հետ կառուցողական համագործակցության արդյունքում վերջին տարիների ընթացքում ձեռնարկվել են կոնկրետ միջոցառումներ՝ ուղղված կալանքի տակ պահելու պայմանները բարելավելուն, ինչպես նաեւ Կառավարության կողմից պրոակտիվ կերպով ձեռնարկվել են քայլեր՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում գերծանրաբեռնվածության խնդիրը հաղթահարելու համար[2]:

Իր հերթին, Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ) 2019 թվականի դեկտեմբերին Հայաստան կատարած այցի վերաբերյալ իր զեկույցում նշել է, որ իր պատվիրակությունը, ի թիվս այլնի [*inter ali*a], ստուգողական այցեր է կատարել «Նուբարաշեն» [քրեակատարողական հիմնարկ]: Կոմիտեն ողջունել է Հայաստանի իշխանությունների՝ մինչեւ 2022 թվականի վերջը վատթարագույնից մինչեւ գրեթե ընդունելի նյութական պայմաններ ունեցող մի քանի հին քրեակատարողական հիմնարկներ ([այդ թվում]՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը) փակելու եւ դրանք այնպիսի նոր քրեակատարողական հիմնարկներով (կամ բաժանմունքներով) փոխարինելու ծրագրերը, որոնք կառուցվելու են զրոյից՝ միջազգային ժամանակակից չափանիշներին համապատասխան[3]:

Ուստի Կառավարությունը գտնում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի այն խախտումների կանխարգելման մասով, որոնց վերաբերյալ դիմումատուն սույն գործով բողոք է ներկայացրել, ներկայումս Հայաստանի կառավարության կողմից ձեռնարկվում են ընդհանուր միջոցառումներ՝ հետագայում նմանօրինակ խախտումները կանխելու նպատակով: Այսպիսով, դիմումատուին սույն գործով տրամադրվող դրամական փոխհատուցումը համարվում է բավարար արդարացի փոխհատուցում»:

Նրանք Դատարանին առաջարկել են հանել գանգատը գործերի ցուցակից՝ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի: Առաջարկվող գումարը փոխարկվելու է պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, եւ ենթակա է վճարման

[2] Մուշեղ Սաղաթելյանի խմբի գործին առնչվող՝ Կառավարության գործողությունների ծրագիր (2020 թվականի ապրիլի 2)
[3] CPT/Inf (2021)10

Դատարանի որոշման մասին ծանուցելուց հետո երեք ամսվա ընթացքում: Այդ գումարները նշված եռամսյա ժամկետում չվճարելու դեպքում Կառավարությունը պարտավորվում է այդ ժամկետը լրանալու օրվանից մինչեւ վճարման օրն այդ գումարների համար վճարել պարզ տոկոսներ՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ: Վճարումը համարվում է գործի վերջնական լուծում:

Դիմումատուին Կառավարության միակողմանի հայտարարության պայմաններն ուղարկվել են սույն որոշումը կայացնելու ամսաթվից մի քանի շաբաթ առաջ: Վերջինս մերժել է այն:

Դատարանը նկատում է, որ 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով իրեն իրավունք է վերապահվում հանել գործը ցուցակից, եթե.

«...Դատարանի կողմից հիմք ընդունված որեւէ այլ պատճառով գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ»:

Այսպիսով, այն կարող է գանգատը հանել գործերի ցուցակից՝ 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ պատասխանող Կառավարության կողմից միակողմանի հայտարարության հիման վրա, նույնիսկ եթե դիմումատուն ցանկություն է հայտնում, որ գործի քննությունը շարունակվի (տե՛ս մասնավորապես Թահսին Ակարն ընդդեմ Թուրքիայի վճիռը (նախնական առարկություններ) [ՄՊ] [*Tahsin Acar v. Turkey* judgment (preliminary objections) [GC]], թիվ 26307/95, §§ 75-77, ՄԻԵԴ 2003-VI):

Դատարանը կալանքի տակ պահելու ոչ պատշաճ պայմանների հետ կապված բողոքների վերաբերյալ ձեւավորել է հստակ եւ ծավալուն նախադեպային իրավունք (տե՛ս, օրինակ՝ Մուրշիչն ընդդեմ Խորվաթիայի [ՄՊ] [*Muršić v. Croatia* [GC]], թիվ 7334/13, §§ 99-101 եւ 137-41, 2016 թվականի հոկտեմբերի 20, եւ *Գասպարին ընդդեմ Հայաստանի* [*Gaspari v. Armenia*], թիվ 44769/08, §§ 50-53, 2018 թվականի սեպտեմբերի 20):

Դատարանը նկատի է առնում ներկայումս Կառավարության կողմից ձեռնարկվող ընդհանուր միջոցառումները, ինչպես նշված է իրենց հայտարարության մեջ:

Հաշվի առնելով Կառավարության հայտարարության մեջ բերված փաստարկները, ինչպես նաեւ առաջարկվող փոխհատուցման գումարը, որը համապատասխանում է նմանատիպ գործերով տրամադրված գումարի չափին, Դատարանը համարում է, որ գանգատի քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ (37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետ):

Բացի այդ, հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները՝ Դատարանը բավարարված է, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, ինչպես սահմանված է Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով, չի պահանջում շարունակել գանգատի քննությունը (37-րդ հոդվածի 1-ին կետ՝ վերջում):

Եվ վերջապես, Դատարանն ընդգծում է, որ եթե Կառավարությունը չպահպանի իր միակողմանի հայտարարության պայմանները, ապա գանգատը կարող է վերստին ընդգրկվել գործերի ցուցակում՝ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 2-րդ կետի (տե՛ս *Յոսիպովիչն ընդդեմ Սերբիայի* (որոշում) [*Josipović v. Serbia* (dec.)], թիվ 18369/07, 2008 թվականի մարտի 4):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նպատակահարմար է գործը ցուցակից հանելը:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Նկատի է առնում պատասխանող Կառավարության հայտարարության պայմանները, ինչպես նաեւ դրանցով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու պայմանավորվածությունները.

Որոշում է հանել գանգատը գործերի իր ցուցակից՝ համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2021 թվականի դեկտեմբերի 16-ին:

Վիկտորյա Մարադուդինա՝ Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար	Յոլիեն Շուկինգ՝ Նախագահ

ՀԱՎԵԼՎԱԾ

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքների մասով գանգատ

(կալանքի տակ պահելու ոչ պատշաճ պայմաններ)

Գանգատ թիվ Ներկայացման ամսաթիվը	**Դիմումատուի անունը Ծննդյան տարին**	**Ներկայացուցչի անունն ու գտնվելու վայրը**	**Կառավարության հայտարարությունը ստանալու ամսաթիվը**	**Դիմումատուի դիտարկումները ստանալու ամսաթիվը**	**Նյութական եւ ոչ նյութական վնասի, ինչպես նաեւ ծախսերի ու ծախքերի մասով վճարվող գումարը (եվրոյով)[1]**
41320/13 19 հունիսի 2013թ.	**Արամ ԴԱՎԹՅԱՆ** 1956 թվական	Սվարյան Նվարդ Երեւան	29 հուլիսի 2021թվական	11 սեպտեմբերի 2021թվական	3 600

[1] Գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ